ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը.

Անի Խանաղյան, ՀՀ ֆինանսների նախարարության եկամուտների քաղաքականության և վարչարարության մեթոդաբանության վարչության եկամուտների քաղաքականության և հարկային վարչարարության մեթոդաբանության բաժնի ավագ մասնագետ.

2. Գործուղման վայրը և ժամկետները.

Ք. Վիեննա (Ավստրիայի Հանրապետություն), 2023 թվականի հունիսի 19-ից մինչև հուլիսի 14-ը:

3. Հրավիրող կողմը.

Վիեննայի միացյալ ինստիտուտ.

4. Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը).

«Կիրառական տնտեսական քաղաքականություն» («Applied Economic Policy») թեմայով դասընթացի նպատակն էր զարգացնել և խորացնել քաղաքականության մշակման հմտությունները, մեկնաբանել դրանց հիմնական հասկացությունները, ծանոթանալ վերջիններիս վերլուծման ներկայիս ժամանակակից մեթոդներին:

5. Քննարկված թեմաները.

Դասընթացի ընթացքում, մասնավորապես, քննարկվել են հետևյալ թեմաները.

1) Ավստրիայի տնտեսական և քաղաքական խնդիրներ,

- Ավստրիայի տնտեսությունը, տնտեսական զարգացման առանձնահատկությունները և տնտեսական քաղաքականությունները,
- Եվրամիությունը և միության անդամ երկրների միջև տնտեսական քաղաքականությունների կոորդինացումը,

2) հանրային քննարկումներին մասնակցելու և հաղորդակցման հմտություններ,

3) մակրոտնտեսական քաղաքականության խնդիրներ,

• մակրոտնտեսական կայունություն և կայունացման քաղաքականություններ (հարկաբյուջետային, դրամավարկային, արժութային քաղաքականություններ),

• հարկային քաղաքականություն և պետության եկամտային քաղաքականություն,

• աշխատանքի շուկա և դրա կարգավորման քաղաքականություն,

• գործազրկություն և դրա հաղթահարման հիմնախնդիրներ,

• կապիտալի հոսքեր և դրանց կառավարում,

4) տնտեսության ֆինանսական հատվածի խնդիրներ,

• ֆինանսական կայունություն,

• միկրո և մակրոպրուդենցիալ քաղաքականություններ,

• Ավստրիայի բանկային համակարգը, բանկային վերահսկողությունը և մակրոպրուդենցիալ քաղաքականությունը,

• Արևելյան Եվրոպայի ֆինանսական խնդիրներ,

5) առևտրային քաղաքականություն և միջազգային առևտրային հարաբերություններ,

• արտաքին առևտրի տեսություններ,

• արտաքին առևտրային քաղաքականության գործիքներ,

• տնտեսությունների ինտեգրման հարցեր, գլոբալ արժեշղթաներ, օտարերկյա ուղղակի ներդրումներ և վերազգային կազմակերպություններ,

• արտաքին առևտրի և մրցունակության տեսլականներ,

• Առևտրի համաշխարհային կազմակերպություն, առևտրային համաձայնագրեր, առևտրի կարգավորման կանոններ:

6. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.

Չորսշաբաթյա դասընթացի ընթացքում հանդիպումներ են տեղի ունեցել Համաշխարհային բանկի, Ավստրիայի հանրային ոլորտի ներկայացուցիչների, Ավստրիայի ֆինանսների նախարարության, Ավստրիայի Ազգային բանկի և Վիեննայի միացյալ ինստիտուտի մասնագետների հետ:

Դասընթացի ժամանակ հանդիպումները և ելույթներն իրականացվել են գործնական աշխատանքների, քննարկումների, բանավեճերի տեսքով (պայմանական տնտեսությունների օրինա-

կով), որոնց ընթացքում պարզաբանվել են մակրոտնտեսական քաղաքականության, տնտեսության ֆինանսական հատվածի, միջազգային առևտրային հարաբերությունների առանձնահատկություններն ու խնդիրները:

Մասնակիցների կողմից ներկայացվել են իրենց կողմից կատարված ուսումնասիրությունների և քննարկումների ամփոփ գնահատականները, խնդիրները և դրանց լուծման հնարավոր ուղիները:

Մասնակիցների կողմից ներկայացվել են նաև շնորհանդեսներ կոնկրետ երկրների օրինակներով, որոնք վերաբերվում են ֆինանսական և տնտեսական տարբեր խնդիրների:

Ընդհանուր առմամբ դասընթացը բավականին հետաքրքիր էր՝ հարուստ վերլուծություններով և դրանց վերաբերվող տեղեկատվությամբ: Դասընթացից ստացված գիտելիքները կօգտագործվեն ՀՀ ֆինանսների նախարարության կողմից իրականացվող հետագա աշխատանքներում:

Բոլոր դասախոսությունները իրականացվել են շնորհանդեսների միջոցով՝ մասնակիցների ակտիվ ներգրավմամբ: Կազմակերպվել են սեմինարներ, խմբակային աշխատանքներ և մասնակիցների կողմից կատարված աշխատանքների հիման վրա պատրաստվել ու ներկայացվել են շնորհանդեսներ:

7. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.

Դասընթացի ընթացքում որևէ որոշումների ընդունում կամ փաստաթղթի ստորագրում նախատեսված չէր:

8. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.

Ծանոթանալով տարբեր երկրներում իրականացվող հարկային և մաքսային, դրամավարկային և ֆինանսական քաղաքականությունների մշակման ու իրականացման առանձնահատկություններին՝ առաջարկում եմ քննարկել դրանց լավագույն միջազգային փորձերն ու արդի գործիքակազմերը՝ Հայաստանի Հանրապետությունում իրականացվող ֆինանսատնտեսական քաղաքականությունների իրականացման համատեքստում, քանի որ լավագույն փորձի

դիտարկումն առաջնային կարևորություն ունի արդյունավետ քաղաքականություն մշակելու և իրականացնելու առումով:

Ստորագրությունը, ամսաթիվը:

19.07.2023թ.